# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 ապրիլի 2019թվական N -22-

*ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, համայնքի ենթակայության օբյեկտների հարակից տարածքների նորոգման և պահպանման աշխատանքները իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի բնակիչ՝ Արտակ Ավետիսյանի հետ՝ 2019թվականի ապրիլի 1-ից կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր ութ ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Ծառայությունների վճարումն իրականացնել ամսական վճարման տեսքով՝ 75000 հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ հարկեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

*2019 թվականի ապրիլի <<1>>*

*գ. Ակնալիճ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

1 ապրիլի 2019թվական N -23-

***ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի « Ակնալիճ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N-35-Ն որոշումը, Վահե Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վահե Մուրադյանին տալ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

*2019 թվականի ապրիլի <<1>>*

*գ. Ակնալիճ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

1 / ապրիլի / 2019 թվական — թիվ 24

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածի երկրորդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի ,, Ինքնակամ կառույցի օրիականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Ջոնիկ Լևիկի Սահակյանի դիմումը.*

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Սեփականության իրավունքով /սեփ.իրավունքի N 2340463 վկայական/ Ակնալիճ համայնքի Շիրակի փողոցի թիվ 30 հասցեում գտնվող՝ Ջոնիկ Լևիկի Սահակյանին /ծնված՝ 08.10.1974 թ./, պատկանող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված՝ 98.0 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 1.30 քմ մակերեսով ծածկը, ինքնակամ բացված 2 պատուհանը ճանաչել օրինական, սահմանված վճարների գանձմամբ ՝ 912-Ն որոշմամբ հաշվարկված՝ ընդամենը արտաքին 98.0քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար ՝ բնակելի տների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի և ինքնակամ բացված 2 պատուհանի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 860դրամ, բնակելի տներին կից տնտեսական և օժանդակ կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ 6-ապատիկի չափով՝ 516դրամ ընդամենը՝ 86700Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:
2. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, օրինականացման համար սահմանված վճարումը Ակնալիճ համայնքի բյուջե չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ գրանցման , իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# ՈՐՈՇՈՒՄ

<<12>ապրիլի 2019թվական N 25

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի Դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով „Տեղական ինքնակառավարման մասին „ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքին պատկանող 012- ծածկագրի բնակ.նշանակության 0.0197հա հողամասին տալ Հոկտեմբերյան փողոց թիվ 44 հասցեն:
2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

2019թվական ապրիլի15
Գ.Ակնալիճ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>ապրիլի 2019թվական N 26

## ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի Դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով „Տեղական ինքնակառավարման մասին „ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքին պատկանող 016- ծածկագրի բնակ.նշանակության 0.0587հա հողամասին տալ Շիրակի փողոց թիվ 35 հասցեն:
2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

2019թվական ապրիլի12
Գ.Ակնալիճ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<12>ապրիլի 2019թվական

N 27

## ՀԱՄՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի Դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով ,,Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքին պատկանող 032- ծածկագրի բնակ.նշանակության 0.9660հա հողամասին տալ Ազատամարտիկների փողոց թիվ 47 հասցեն:
2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

2019թվական ապրիլի 12
Գ.Ակնալիճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

16 ապրիլի 2019թվական

թիվ 28

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած հողի աճուրդային կարգով վաճառքի արդյունքները.

Որոշում եմ՝

1.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած գյուղ.նշանակության և բնակ. նշանակության հողատարածքները աճուրդային կարգով վաճառելու արդյունքները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար Գ.Միսակյան

2019թվականի ապրիլի 16
Գ.Ակնալիճ

Հավելված
Արմավիրի մարզի
Ակնալիճ համայնքի ղեկավարի
2019թվականի ապրիլի 16-ի
Թիվ 28 որոշման

# ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ՝ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած 0.503 հա բնակ.նշանակության հողատարածքը աճուրդային կարգով վաճառելու արդյունքները:
Աճուրդում հաղթող ճանաչված Գարուշ Տեփանյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:
2.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած 0.528հա բնակ.նշանակության հողատարածքը աճուրդային կարգով վաճառելու արդյունքները:
Աճուրդում հաղթող ճանաչված Ֆերդինատ Ֆիդանյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:
3.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած 0.3392հա գյուղ.նշանակության հողատարածքը աճուրդային կարգով վաճառելու արդյունքները:
Աճուրդում հաղթող ճանաչված Արմեն Հովհաննիսյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:
4.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած 0.2հա գյուղ.նշանակության հողատարածքը աճուրդային կարգով վաճառելու արդյունքները:
Աճուրդում հաղթող ճանաչված Ներսես Թադևոսյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:
5.Հաստատել Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում կայացած 1.5541հա գյուղ.նշանակության հողատարածքը աճուրդային կարգով վաճառելու արդյունքները:
Աճուրդում հաղթող ճանաչված Արամայիս Մարկոսյանի հետ կնքել առք ու վաճառքի պայմանագիր:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

19 ապրիլի 2019թվական                                                                 թիվ 29

### ՕՖԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով,*

*Հիմք ընդունելով Ակնալիճ համայնքի ,,Հրաշամանուկ,, մանկապարտեզ Հոակ-ի տնօրեն՝*

*Օֆիկ Մանուկյանի դիմումը.*

Որոշում եմ՝

1. Ակնալիճ համայնքի ,,Հրաշամանուկ,, մանկապարտեզ Հոակ-ի տնօրեն՝ Օֆիկ Մանուկյանին 2019թվականի ապրիլի 19-ից ազատել աշխատանքից:
2.Աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Ս.Բասմաջյանին՝ կատարել վերջնահաշվարկ:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար                    Գ.Միսակյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2019թվական                                        թիվ 30

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ Հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հիմք ընդունելով Ակնալիճ համայնքի բնակիչ՝ Օֆիկ Մանուկյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. 2019թվականի ապրիլի 30-ից մինչև 2019թվականի դեկտեմբերի 30-ը Ակնալիճ համայնքի ,,Հրաշամանուկ,, մանկապարտեզ Հոակ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնին նշանակել՝ Օֆիկ Սոկրատի Մանուկյանին:
2.Աշխատավարձի վճարումը կատարել հաստատված հաստիքացուցակի համաձայն՝ սահմանված դրույքաչափի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար                Գ.Միսակյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ակնալիճ, (093) 484880, aknalich.armavir@mta.gov.am

### Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

09 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 4

ԳՐԱՊԻՈՆ ՇԱՌՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 159-րդ հոդվածի առաջին մասով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2017թվականի փետրվարի ի թիվ 01/03.2/675-17 գրությունը.

Կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գրապիոն Շառոյանին 2019թվականի ապրիլի 10-ից տրամադրել 2012թվականի ամենամյա արձակուրդի մի մասը՝ 12 աշխատանքային օր տևողությամբ:

2.Աշխատանքի է ներկայանալու 2019թվականի ապրիլի 29-ին:

3.Գ.Շառոյանի բացակայության ժամանակ նրա աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել առաջատար մասնագետ՝ Սվետլանա Բաամաջյանին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

**Համայնքի ղեկավար՝** ԳԵՎՈՐԳ ՄԻՍԱԿՅԱՆ

20 __ թ. ______________ ____
գ.Ակնալիճ